

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. դեկտեմբերի 14-ի
նիստի /արձանագրություն N 7/

1. Արցախի մշակութային և կրթական կյանքն աշխուժացնելու նպատակով՝

1.1. 2017թ. մայիս ամսին արվեստի 3 բուհերի ուսանողների մասնակցությամբ կազմակերպել այցելություններ Արցախում տեղակայված զորամասեր,

ԵԹԿՊԻ-ի ուսանողների մասնակցությամբ զորամասերում անցկացվելիք միջոցառումների ծրագրերի նախապատրաստման պատասխանատուներ համարել Թատրոնի, Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետների դեկաններ Է. Հեքեքյանին և Ա. Երզինկյանին, Ուս. թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանին:

Աշխատանքների համակարգումը հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին,
1.1.1 հանձնարարել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանին կազմակերպել անցկացվող միջոցառումների նկարահանման աշխատանքները,

1.2 2017թ. մարտ ամսին՝ Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ, կազմակերպել Շուշիի դերասանական կուրսի ուսանողների այցը Երևան՝ 5 օրով:

Երևանում կազմակերպել այցելություններ թատրոններ, թանգարաններ, անցկացնել վարպետության դասեր բեմական խոսք և բեմական շարժում առարկաներից:

Ծրագրի իրականացման պատասխանատվությունը դնել պրոռեկտոր Ն. Սարգսյանի, Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանի և Ուս. թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանի վրա:

2. Ուսման վարձերի հավաքագրման արդյունքների վերաբերյալ դեկանների հաղորդումներն ընդունել ի գիտություն,

2.1 Արվեստի տեսության, պատմության և կառավարման մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Արմեն Սարգսյանի 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի վարձը գեղջել 50%-ով,

2.2 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ուսման վարձերի մուծման վերջնաժամկետը երկարաձգել մինչև ս.թ. դեկտեմբերի 27-ը,

2.3. 3-րդ և 4-րդ կուրսերում սովորող ուսանողներին բացառության կարգով թույլատրել 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ուս. վարձավճարի պարտքերը մարել II կիսամյակի ընթացքում:

3. ԵԹԿՊԻ-ի ՄՏՈՒԿ պրոդաքշնի զարգացման ներդրումային ծրագրի

նախապատրաստման աշխատանքների ընթացքը համարել անբավարար,

3.1 ներկայացված նախագիծը լրամշակելու նպատակով ս.թ. դեկտեմբերի 19-ին ռեկտոր գլխավորությամբ կազմակերպել աշխատանքային քննարկում պրոռեկտորներ Ն.

Սարգսյանի, Վ. Եղիազարյանի, դեկան Ա. Երզինկյանի, գլխ. Հաշվապահ Հ. Նալբանդյանի մասնակցությամբ,

3.1.1 հանձնարարել Վարուժան Ավանեսյանին ներկայացված նախագծի պատճենները նախապես տրամադրել աշխատանքային խմբի անդամներին,

3.1.2 հանձնարարել կինոֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանին ներկայացնել ներդրումային նախագծով պահանջվող կինոտեխնիկայի հիմնավորումը:

4. Հաշվի առնելով ՀՀ ԿԳ նախարարի և ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի միջնորդագրերը`

4.1 թույլատրել Թատրոնի ֆակուլտետի դերասանական 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ Հովհաննես Հայկի Հակոբյանի և Գագիկ Վարդանի Հարությունյանի ուսումնառությունը կազմակերպել անհատական ժամանակացույցով,

4.2 հաստատել Հ. Հակոբյանի և Գ. Հարությունյանի համար Թատրոնի ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացված 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ստուգաքննների և քննությունների հանձնման անհատական ժամանակացույցը:

5. Ս.թ. դեկտեմբեր ամսին ինստիտուտի արտաբյուջեի հաշվից աշխատակազմին հատկացնել պարգևավճար հետևյալ հաշվարկով`

5.1 վարչական և սպասարկող անձնակազմին` մեկամսյա աշխատավարձի 50%-ի չափով` չներառելով ներքին համատեղության համար վճարվող ամսական գումարի չափը,

5.2 պրոֆեսորադասախոսական անձնակազմին` մեկամսյա աշխատավարձի 50%-ի չափով:

6. ԵԹԿՊԻ-ի հաստիքների օպտիմալացման նպատակով

6.1 2017թ. հունվարի 1-ից կրճատել պահեստապետի հաստիքը` 1 դրույք, հերթապահ հավաքարարի հաստիքը` 1 դրույք,

- 6.2 պահեստապետի պարտականությունները դնել տնտեսական մասի վարիչ Կորյուն Դրաստամատի Շահինյանի վրա՝ հատկացնելով ամսական 20. 000 դրամ հավելավճար,
- 6.3 Նորիկ Համբարձումի Խաչատրյանին ազատել պահեստապետի պարտականությունից և փոխադրել երեկոյան պահակի հաստիքի՝ 0,5 դրույք ծանրաբեռնվածությամբ:
7. Հանձնարարել Ուս. թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանին և իրավախորհրդատու Է. Մանասերյանին նախապատրաստել և քննարկման ներկայացնել Ուս. թատրոնին կից մանկապատանեկան թատերական ստուդիա հիմնելու նախագիծը:
8. ԵԹԿՊԻ-ի խորհրդի նիստը գումարել 2017թ. հունվարի վերջին 10-օրյակում,
- 8.1 հանձնարարել ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին ներկայացնել անհրաժեշտ տվյալներ:
9. Ինստիտուտի կայքի վերաբերյալ Հ. Ավագյանի հաղորդումն ընդունել ի գիտություն, նախապատրաստման աշխատանքների ընթացքը համարել բավարար:
10. Ելնելով ինստիտուտի ֆինանսական վիճակից, թույլատրել ինստիտուտում տեղադրելու համար անհրաժեշտ կրակմարիչները գնել ոչ միանվագ:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան